


Ռ Ռ Ե Ս Ա Ն Ա Յ Պ Է Ս Բ Ե Ր



«Բանասէր» ամսագրի պարտաճանաչութիւնն եւ կանոնաւոր հրատարակումն է, որ մեզ խրախուսեց տպել մի շարք նոր գրագէտների կենսագրականները: Մենք արդէն հաւաքած ենք եւ շուտով առանձին բառարանով կը տպենք ռուսահայ բոլոր Հայ գրագէտ-գործիչների կենսագրութիւնները, դոցա հետ միացնելով եւ տաճկահայ, վենետիկեան, վիեննական, հնդկահայ, անգլահայ եւ այլն եւ այլն գործիչներն, նոյնիսկ օտար հայասէր-հայագէտներն: Այժմ մենք վերցնում ենք որոշ շրջան, այն է նոր գրագէտներն, որպիսիք են Շիրվանզադէ, Աբեղեան, Լէօ, Նար-Դոս, Յով. Յովհաննիսեանց, Ա. Մատուրեանց, Գ. Չուբար, Ա. Աղապեանց, Ա. Ահարօնեանց, Տ. Յովհաննիսեանց, Գ. Չալխուշեանց, Մ. Բերբերեանց, Յար. քահ. Ճուղուրեանց, Գօշ, եւ այլն, այնպէս որ կաշխատենք դոնէ ամեն մի համարում մէկ կամ երկու կենսագրական տալ համառօտակի, առանց կուսակցական հաշիւների ամեն մէկի վրայ նայելով իբրեւ Հայ գործչի վրայ եւ դորա հետ էլ շաղկապելով նաեւ նոցա դրական գործնէութեան համառօտ անտութիւններ առանց սեպհական չոր ու ցամաք դատողութիւնների, որովհետեւ մենք ուզում ենք մեզ անպարտ դուրս բերել այլ եւ այլ թերի կարծիքներից, որով եզրակացութեան սխալ լինելը մեզ այլ կերպ կը պատկերացնէ: Ուրեմն կատարենք մեր խօսքը եւ դիմենք առաջ: Կենսագրականների ճշտութեան համար երաշխաւոր ենք եւ արտասպելու կամ օգտուելու իրաւունքը մեզ ենք վերապահում:

ա. Շիրվանզադէ (Աղեքսանդր Մովսիսեանց)

Փամանակիս յայտնի վրպասաններից մէկը, ծնուել է Շամախի քաղաքում 1859թ. ապրիլի 7-ին: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղւոյն գաւառական ուսումնարանում մինչեւ 16 տարեկան հասակը: 1875թ. տեղափոխւում է Բագու եւ սկսում է ծառայել Նահանգական Վարչութեան մէջ մինչեւ 20 ա. դառնալը, այսինքն մինչեւ 1879թ., որ տարւանից թողնելով պետական ծառայութիւնը սկսում է ծառայել նախ թային մասնաւոր հիմնարկութիւններում իբրեւ հաշուապահ: 1884թ. թողնելով Բագուն՝ տեղափոխւում է Թիֆլիս, որտեղ եւ անձնատուր է լինում գրականութեան: Գրական ասպարիզում առաջին անգամ երեւացել է 1879թ. մարտ ամսից՝ թղթակցելով «Մշակ»ին Բագուից եւ այնտեղի բանուորների կեանքից յօդուածներ գրելով, որին հետեւել է եւ ա-

առջին վիպական գրուածքը «Հրդեհն նաւքագործարանում», որ տպուած է 1883թ. «Մշակ»ում եւ նոյն թուականին տպուել է նաեւ «Գործակա-  
սարի յիշատակարանից» յօդուածներէ շարքը : 1885թ. «Մշակ»ի ժամանա-  
կաւ որ դադարուածը առիթ է լինում աշխատակցելու «Արձագանք»ին որ  
եւ շարունակում է հինգ տարի , կատարելով նաեւ փոխ-խմբագրի պաշ-  
տօն : 1890թ. թողնելով «Արձագանք»ը այնուհետեւ սկսում է մէջ ընդ  
մէջ աշխատակցել «Տարազ»ին եւ «Մուրճ»ին , առաջինում տպելով յօ-  
դուածներն ու ֆելիէտօններ իսկ երկրորդումը «Արսէն Դիմաքսեան»  
վէպը , որ տպուած է եւ առանձին գրքով : Առանձին գրքով լոյս տե-  
սած գրքերն են «Նաւնուս» վէպը , որ վերցրած է Շամախու կեանքից ,  
որտեղ նկարագրուած է թշուառ քաղաքի խիստ երկրաշարժի հասցրած  
հարուածները . Օրիորդ Լիզա , Խնամասար , Նորերից մեկը , Արաւքիև ,  
Զուր յոյսեր , Խեղագարը , 15 սարի անցած , Փարսևա Ասադ , Հարած-  
վածը , Թանգագին կապուկ , վէպիկներն ու պատմուածքները , Ճարա-  
գարը վէպը , որ ամենայաջող գրուածքներից մէկն է , Մեղանիա վէպիկ ,  
Աշխատակցել է նաեւ «Լուսնայ»ին , որտեղ տպուած է Վարդան Ահրու-  
մեան վէպը : Շիրվանզադէի վերջին վէպն է Քասուր , որ մեծ ընդունե-  
լութիւն գտաւ : Այս վէպը Բագուի ներկայ անկեալ կեանքի կենդանի  
պատկերն է , այդտեղ կը տեսնէք բագուեցի արիւնասխում հարստին , հա-  
րստութիւնից փճացած մարդկանց խմբերին , եւ ամբողջ կեանքը պարտ-  
ւում է նաւթի շուրջը , որով Բագուի յայտագիրն է Դանտէի Դժողքի  
յայտագիրը՝ «Թողէք ձեր յոյսերը» , այսինքն մանելով այդտեղ մարդս  
նիւթապէս բարձրանում է , սակայն բարոյապէս ընկնում : Դոյնանման  
մի գրուածք է եւ «Նեղինէ» դրաման , որ դեռ չը տպուած բեմ գրուե-  
ցաւ եւ ահագին աղմուկ հանեց : Այս էլ առած է Բագուի կեանքից եւ  
իրական մի եղելութիւն է , որի մասին երկար գրուած էր լրագիրներում  
սրանից երկու տարի առաջ : Այս մասին մենք առիթ ենք ունեցել գրե-  
լու «Բիւզանդիոն»ում : Շիրվանզադէն դեռ եւս երիտասարդ եւ քաջա-  
ռողջ լինելով շատ նոր բան կարող է մեզ տալ : Նորա վէպերն ազատ  
են ձանձրոյթ պատճառող հատուածներից , դոցա մէջ շոշափուած են  
առօրեայ կեանքն ու մարդկութիւնը : Լեզուն թէպէտեւ առաջին վէպե-  
րում թոյլ է , սակայն հետզհետէ փոխուելով , այսօր աւելի մաքուր է  
եւ ազատ նախկին սխալներից :

### բ. ԱԲԵՂԵԱՆ ՄԱՆՈՒԿ

Ռուսահայ բանասէր , ծն. Հին Նախիջևանի մօտ Աստապատ գիւ-  
ղում 1865 թ. , Սկզբնական կրթութիւնն ստացած է Նախիջևանի մօտ  
Կարմիր վանքի դպրոցում , իսկ յետոյ Գէորգեան Ճեմարանում , որ եւ  
աւարտել է 1885 թ. , Աւարտելուց յետոյ նոյն ուսումնարանում երկու  
տարի ուսուցչի եւ վերակացուի պաշտօն է վարել իսկ 1887-1889 թ.

ուսուցչութիւն է արել Շուշու թեմ. Գարանոցում , իսկ վերջին թը-  
ւականից մինչեւ 1893 թ. Տփլիսի ծխական ուսումնարաններում : 1893  
թ. գնալով արտասահման՝ ուսումնասիրել է ընդհանուր գրականութիւն  
93/95 թ. եւ 96/98 թ. վեցամսեակներին լսելով գերմանական համալը-  
սարաններում , իսկ 95/96 թ. Փարիզի համալսարանում իբրեւ ազատ  
ուսկնդիր : 1898 թ. Կովկաս վերադառնալով՝ հրաւիրուեցաւ Գէորգեան  
Ճեմարան Հայոց լեզու եւ գրականութիւն աւանդելու : Արեղեանը դեռ  
արտասահման չը գնացած զբաղուել է ինչպէս Հայոց գրականութեամբ  
նոյնպէս եւ Հայոց լեզուով , այդ ժամանակ նա «Նոր Դար»ի գլխաւոր  
աշխատակիցներից մէկն էր եւ նրա յօդուածներն առանձին հետաքրքրու-  
թեամբ էին կարդացուում : Այդ ժամանակներ հէնց լոյս ընծայեց «Հայոց  
լեզուի ուղղագրութիւնը» : Բաւական յաջող եղան եւ նրա առաջին  
թարգմանութիւնները՝ ինչպէս ուս գրող Գօգօլի «Տարազ Բու'լբա» եւ  
Տօլստօյու «Արդարն ու մեղաւորը» : Մինչեւ Համալսարան գնալը մէջ  
ընդ մէջ աշխատակցում էր «Մուրճ»ին :

Վերադառնալով էջմիածին , լինելով մեր աշխարհի կեդրոնում  
նրա գլխաւոր գործն եղաւ զբաղուել մեր ժողովրդական բանահիւսու-  
թեամբ , որ եւ մացրեց Գէորգեան Ճեմարան : Ինչպէս լսեցինք հաստատ  
աղբիւրներից ահագին նիւթեր է հաւաքել եւ շուտով Կոմիտաս վ. Գէ-  
որգեանի հետ լոյս կ'ընծայէ : Ժողովրդական բանահիւսութիւնը նա ա-  
ռանձին խնամքով է ուսումնասիրում , դեռ մինչեւ Համալսարան մտնելն  
էլ մի նմուշ տուեց «Դաւիթ եւ Մհեր» դիւցազնավէպում , բայց այժմ  
գորա հետ է միացրել եւ մեր հին ժողովրդական գրականութիւնը եւ  
այդպիսով է մշակում իւր գործը , որ շուտով ապուած կը տեսնենք :  
Վերջերս «Արարատ»ի գլխաւոր աշխատակիցն էր , որի մէջ շարունակա-  
բար տպուեցաւ «Հայ ժողովրդեան Առասպելները Մովսէս Խորենացու  
Հայոց պատմութեան մէջ» (քննադատութիւն եւ ուսուածք) : Այդ գործը  
մի գրքի մէջ լոյս տեսաւ 1901 թ. վերջերս :

#### գ. Ա.Գ.Ա.ՊԵԱՆ Ա.ՐՇԱԿ

Մեր ժողովրդական համեստ գրողներից մէկը , ծն. Ղազախի Այու-  
ղի (Լալի) գիւղում 1860 թ. մայիսի 8-ին : Սկզբնական կրթութիւնն  
ստացել է իւր հօր մօտ , որ քահանայ էր : Հօր միակ ցանկութիւնն է  
լինում Արշակին Ներսիսեան Գար. ուղարկել , սակայն 1867 թ. վախ-  
ճանուելով նրա մայրը նրան յանձնում է մօտակայ գիւղերում գտնուած  
երկու նորընծայ քահանաների խնամքին : Վերջապէս 1869թ. կատար-  
ւում է հօր կտակը եւ Արշակին տանում են Տփլիս , սակայն ուշ լի-  
նելու պատճառաւ տալիս են Հաւլաբար թաղի Շամքորեցոց Կարմիր  
Աւետարան եկեղեցու ծխական դպրոց , որտեղից 1870 թ. նա անցնում

է ներս. Դպրոց : Ուսանելով մինչև 1875 թ., այդ տարին արձակուում է Դպրանոցից իբրև ազմկարար միեւնոյն ժամանակ զրկուելով այն բարերարութիւնից, որ խոստացել էր Հոգարարձութիւնը՝ Էֆէնդեանի հաշուով Գերմանիա ուղարկել : Թողնելով Դպրանոցը նախ սկսում է ծառայել Էնֆիաճեանցի դրախանութում իսկ յետոյ Մուշեղ քահ. Տէր Աւետիգեանցը 1876 թ. ուղարկում է Գանձակի գաւառի Գետաշէն գիւղ իբրև ուսուցիչ : Երկու տարուց յետոյ թողնում է այս պաշտօնն էլ եւ գիւղ քաշւում, իսկ 1879 թ. նշանակւում Զաքաթալա աւանում ուսուցիչ, ուր մնացել է մինչև 1881 թ., իսկ 81-12 թ. Նուխի : Այս վերջին երկու քաղաքներում պատրաստուելով ուսերէնից, դալիս է Տըփլիսիս եւ մտնում ուսաց Աղէքսանդրեան ուսուցչական ինստիտուտ, որ աւարտել է 1886 թ. :

Գրական գործնէութիւնը սկսում է Զաքաթալայից՝ թարգմանելով «Բնախօսութիւն» գիրքը (տպ. 1881 թ.), որտեղից եւ ուղարկում է ա. յօդուածը «Մեղու-Հայաստանի» օրաթերթին (տպ. 1881 թ. մայիսի 22) : Այնուհետեւ շարունակաբար գրել է «Մեղու»ի մէջ եւ յետոյ «Նոր-Դարում» : 1886 թ. գնում է Մօզդոկ ուսուցչի պաշտօնով եւ այդտեղից առաջին անգամ սկսում է գրել գիւղական կեանքից : Առաջին գործն է «Մուսինի գանգատը» : Գլխաւորապէս սորա գրական գործնէութիւնը յօդուածներն են, որոնք յաջող են եւ սրամիտ : 1889 թ. Տփլիսում, 90-91 թ. Զալալ-Օղլի, 91-92 Հայոց Ախալքալաքում, իսկ 92-96 թ. դարձեալ Տփլիսում է ուսուցչութիւն արել : Հայոց ուսումնարանների փակումից յետոյ 1897 թ. քաշուեցաւ գիւղ, իսկ վերջերս մի առժամանակ ծառայեց «Նոր-Դար»ի խմբագրատան կազմելով «Մամուլի շուրջ»ը եւ շարունակաբար յօդուածներ տալով ստորագրութեամբ եւ անստորագիր : 1901-902 թ. ձեմարանական տարւայ համար հրաւիրուեցաւ Երեւանի Թեմական Դպրանոց ուսուցիչ, որտեղ եւ մնում է ցարդ :

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

### ՍՈՓՈՆ ՊԷՋԻՐՃԵԱՆ

Ուրախութեամբ կ'իմանանք որ Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Էջմիածնայ վանքը զարդանկարել տալու նպատակով՝ մասնաւոր նամակով մը հրաւիրած է բարիզարնակ հայ տաղանդաւոր զարդանկարիչ Սոփոն Պէզիրճեանը :

Որքան որ ալ ամէն արուեստատէր հայրենակիցներու ծանօթ է պ. Պէզիրճեան, այնու հանդերձ շահեկան կը համարենք այս առթիւ մեր կողմանէ մէկ երկու խօսք ընել անոր նկարագրի, գործունէութեան եւ ընդգրկած մասնաճիւղին առւած ընդարձակութեան մասին :